

Արման Խաչիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ/ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

**Հայաստանի Հանրապետություն, Եվրոպական համայնքներ/Եվրոպական Միություն,
ՏԱՄԻՍ, վերափոխումներ, մարդասիրական օգնություն, պարենային անվտանգության
ծրագիր, Մեծամորի ատոմակայան**

Եվրոպայի հետ Հայաստանի կապերը ձևավորվեցին անկախության ձեռք բերելուն զուգընթաց և հիմնվեցին համընդհանուր պատմության և արժեքների, երկուստեք բարի կամքի դրսևորման ու պատրաստակամության վրա: 1990-ական թվականներին Հայաստանը, գտնվելով քաղաքական և տնտեսական բարդ վիճակում՝ փորձում էր գործընկերային հարաբերություններ հաստատել ոչ միայն եվրոպական երկրների հետ առանձին-առանձին, այլև դրանք միավորող միջազգային կառույցների հետ, ինչպիսիք էին ՄԱԿ-ը, ԵՄ-ն, ԵՀ-ն, ԵԱՀԿ-ն, ՆԱՏՕ-ն և այլն: Դրանցից յուրաքանչյուրը փորձեց աջակցել Հայաստանին՝ դուրս գալու գրեթե անելանելի վիճակից և վերադառնալու զարգացման բնականոն հուն: Իր անգնահատելի օժանդակությամբ հատկապես աչքի ընկավ ԵՀ-ն, որը Հայաստանը ներգրավեց իր նախաձեռնած գրեթե բոլոր ծրագրերում, որոնք միտում ունեին օգնել կառուցելու ժողովրդական արժեքների վրա հիմնված պետականություն, հաղթահարել անցումային շրջանի դժվարությունները և ստեղծել շուկայական տնտեսություն:

Խորհրդային Միության փլուզումը մեծ փոփոխություններ առաջ բերեց աշխարհի քաղաքական քարտեզի վրա, որի արդյունքում ձևավորվեցին նորանկախ պետությունները: Սկզբնական շրջանում այդ պետություններն ընկան քաղաքական, տնտեսական ճգնաժամի մեջ¹: Աշխարհաքաղաքական ուժեր հանդիսացող Եվրոպական համայնքները/Եվրոպական Միությունը (այսուհետ՝ ԵՀ/ԵՄ) և ԱՄՆ-ն սկսեցին ակտիվ քաղաքականություն վարել նախկին ԽՍՀՄ-ի տարածքում, նաև կովկասյան հանրապետություններում: Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց շատ ծանր կացության մեջ: Եթե ներքին տնտեսական ծանր դրությունը ավելացնենք հանրապետության լիակատար շրջափակումը, որին 1993 թ. սկզբներից մասնակցում էր նաև Թուրքիան, ինչպես նաև 1990-ական թվականներին Հայաստան գաղթած փախստականների օրհասական դրությունը և էներգետիկ ճգնաժամը, ապա հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակի պատկերը կամբողջաճանաչ²: Այսպիսով, Խորհրդային Միության լուծարումից հետո ՀՀ-ն իր առաջին քայլերն

¹ Տե՛ս Եվրոպական Միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում, գլխ. խմբ. Ղազինյան Ա., Երևան, «Տիգրան Մեծ», 2010, էջ 45:

² Տե՛ս Հայոց պատմություն, գլխ. խմբ. Սիմոնյան Հր., Երևան, Ձանգակ 97 հրատարակչություն, 2000, էջ 454:

էր անուն տարածաշրջանային և համաշխարհային քաղաքականության ոլորտ ընդգրկվելու ուղղությամբ¹:

ՀՀ-ի և ԵՅ-ի միջև անմիջական համագործակցությունը սկիզբ է առել 1992 թ. տեխնիկական օգնության ՏԱՄԻՍ ծրագրի շրջանակներում: Հայաստանը, ինչպես և մյուս բոլոր նախկին խորհրդային երկրները ԵՅ-ի կողմից դիտարկվում էին անցումային փուլում գտնվող պետություններ, որոնց անհրաժեշտ էր ցուցաբերել օգնություն՝ դժվարին կացությունից դուրս գալու և զարգացման բնականոն փուլ անցում կատարելու համար: Հարկ է նշել, որ դեռ 1990 թ. դեկտեմբերին Եվրոպայի խորհրդի՝ Հռոմում տեղի ունեցած հանդիպման ժամանակ ԵՅ-ն և նրա անդամ պետությունները համաձայնվեցին աջակցել խորհրդային իշխանությանը տնտեսական և սոցիալական հիմնարար վերափոխումներ իրականացնելու գործընթացում: Որոշվեց, որ այդպիսի աջակցություն ԵՅ-ը պետք է տրամադրի ՏԱՄԻՍ տեխնիկական օգնության ծրագրի շրջանակներում, այնպիսի կարևոր ոլորտներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ բարեփոխումների իրականացման վրա և նպաստել շուկայական տնտեսության ու ժողովրդավարական հասարակության ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը²:

ՏԱՄԻՍ ծրագիրը հիմնականում գործելու էր երկկողմանի համագործակցության հիման վրա, իսկ ծրագրի հիմքը հանդիսանալու էր երկրի ռազմավարական փաստաթուղթը և ազգային ինդիկատիվ ծրագրերը, որոնք պետք է համաձայնեցվեին ամեն գործընկեր երկրի հետ: Ազգային ինդիկատիվ ծրագրերը ուժի մեջ էին մտնում 3-4 տարով և սահմանում երկուսից վեց բնագավառներում գերակա ուղղություններ: Ինդիկատիվ ծրագիրը ձևավորելու էր Գործուղությունների ծրագրի հիմքը, որի հենքի վրա էլ մշակվելու էին օժանդակության և ֆինանսավորման ծրագրեր: Ինդիկատիվ և Գործուղությունների ծրագրերի հիմնական աղբյուրը հանդիսանալու էին ԵՄ/ԵՀ և գործընկեր երկրի միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագիրը և, օրինակ, աղքատության հաղթահարմանը վերաբերող ռազմավարական փաստաթղթերը³: Հաշվի առնելով ԽՍՀՄ նախկին երկրներում տիրող տնտեսական իրավիճակը՝ Եվրոպայի խորհուրդը որոշել էր տեխնիկական օգնությունը կենտրոնացնել հետևյալ առաջնային ոլորտներում՝ պետական և մասնավոր հատվածների վերապատրաստման, էներգիայի, տրանսպորտի, ֆինանսական ծառայությունների, միջուկային անվտանգության, պարենային ապրանքների տարածման և այլն: Հարկ է նշել, որ թեև ՏԱՄԻՍ-ի հիմնական նպատակն էր անցումային փուլում գտնվող ԱՊՀ երկրներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվական և գործնական աջակցություն, սակայն այն նաև միտում ուներ նպաստելու այդ երկրներում

¹ Տե՛ս Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Երևան, «Լուսակն» հրատարակչություն, 2006, էջ 154:

² Տե՛ս TACIS (Technical Assistance Programme to the former republics of the Soviet Union) Annual report from the Commission 1991 and 1992, COM(93) 362 final, Brussels, 28 July, 1993, p. 6, <http://aei.pitt.edu/5630/1/5630.pdf>, (վերջին մուտքը՝ 10.03.2014):

³ Տե՛ս *ibid.*, p. 6:

քաղաքական կայունության ապահովմանը և վերջիններիս միավորմանը համաշխարհային տնտեսության մեջ:

Այսպիսով, ԵՅ-ը փաստորեն դարձավ առաջիններից մեկը, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո իրական աջակցություն առաջարկեց և օգնեց նորանկախ հանրապետություններին նրանց անկախությանը հաջորդած դժվարին տարիներին: Բացառություն չէր կազմում նաև ՀՀ-ն, որը գտնվում էր ծանրագույն տնտեսական և քաղաքական վիճակում: ԵՅ-ն ՏԱՄԻՍ ծրագրի միջոցով փորձեց աջակցել Հայաստանին՝ դուրս գալու ստեղծված բարդ իրավիճակից և նպաստելու հանրապետությունում շուկայական տնտեսություն կառուցմանը, ժողովրդավարության ամրապնդմանը, օրենքի զերակայության ապահովմանը և կառավարման կարողությունների զարգացմանը: ՀՀ-ն ընդգրկվելով 1991 թ. ՏԱՄԻՍ ծրագրի շրջանակներում՝ ստացավ 2,2 միլիոն էջուլ¹ աջակցություն, որը բաշխված էր հետևյալ ոլորտներում վերափոխումներ իրականացնելու. 1) տրանսպորտ, ինչը ենթադրում էր Ջվարթնոց օդանավակայանի պահեստի վերանորոգում, 2) ֆինանսական ծառայություններ՝ Կենտրոնական բանկի վերակառուցում և դրա հետ կապված համապատասխան ուսումնասիրությունների իրականացում, բացի այդ նախատեսվում էր ստեղծել գյուղատնտեսական մասնավոր բանկ, 3) էներգետիկա, որն ուղղված էր էներգետիկ անվտանգության ռազմավարության ստեղծմանը, 4) միջուկային անվտանգություն, ինչը կապված էր Հայկական ատոմային էլեկտրակայանի (այսուհետև՝ ՀԱԷԿ) կամ, ինչպես հաճախ անվանում են, Մեծամորի ատոմակայանի անվտանգության ապահովման հետ²:

1990-ական թվականներին ԵՄ-ի կողմից հատկապես մեծ կարևորություն էր տրվում էներգետիկ ոլորտում միջազգային բազմակողմանի համագործակցության ապահովմանը, ինչի վկայություն է հանդիսանում դեռ 1991 թ. դեկտեմբերի 17-ին Հաագայում Եվրոպայի էներգետիկ խարտիայի ընդունումը, որը ստորագրվել է ԵՅ-ի և 49 երկրների միջև, որոնց թվում էին՝ ԵՅ-ի, ԱՊՀ-ի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, ինչպես նաև ԱՄՆ-ն, Ավստրալիան, Թուրքիան, Ճապոնիան և Կանադան³: Այս համատեքստում նշենք, որ ԵՅ-ի և ՀՀ-ի միջև էներգետիկ ոլորտում համագործակցությունը մեկնարկել է 1992-1993 թթ., որը հիմնականում իրականացվում է ՏԱՄԻՍ ծրագրի միջոցով: Ծրագիրը Հայաստանի համար նախատեսում էր աջակցություն մասնավորապես էներգետիկայի զարգացման և էներգախնայողության ռազմավարության մշակման, Մեծամորի ատոմակայանի աշխատանքի անվտանգության բարձրացման, ՀՀ-ի գազարդյունաբերության, ջեռուցման համակարգերի զարգացման, սակագների մշակման քաղաքականության բնագավառներում: Հայտնի է, որ

¹ Էջուլ-եվրոպական արտարժույթի անվանում է, որը գործարկվել է 1979 թվականից մինչև 1999 թվականը, երբ վերջինիս փոխարինելու եկավ եվրոն: Էջուլ անվանումը ծագում է անգլերեն European Currency Unit, ինչպես նաև հին ֆրանսիական մանրադրամների անվանումից:

² Տե՛ս TACIS (Technical Assistance Programme to the former republics of the Soviet Union) Annual report from the Commission 1991 and 1992, *ibid.*, p. 50:

³ Տե՛ս Taverne B., *Petroleum, industry and governments: a study of the involvement of industry and governments in the production and use of petroleum*, Netherlands, Kluwer law international, second edition, 2008, p. 347:

Սպիտակի երկրաշարժից հետո 1989 թ. Մեծամորի ատոմակայանը փակվեց, ինչի հետևանքով Հայաստանը հայտնվեց էներգետիկ ճգնաժամի մեջ: Այդ փաստը պայմանավորված էր Հայաստանում այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությամբ, նաև Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ՀՀ-ի շրջափակմամբ, ինչն, իր հերթին, թույլ չէր տալիս հանրապետությանը ընդգրկվել Հարավկովկասյան տարածաշրջանում հաղորդակցության ուղիներին վերաբերող ծրագրերում: Չնայած այն հանգամանքին, որ ՏԱՄԻՍ ծրագրի միջոցով որոշ օժանդակություն էր ցուցաբերվում, այնուամենայնիվ դա չէր մեղմացնում երկրում ստեղծված իրավիճակը: Հաշվի առնելով առկա խնդիրները և գրեթե անելանելի իրավիճակը 1993 թ. ՀՀ-ի կառավարությունը որոշում կայացրեց բացել ՀԱԷԿ-ը: Վերանորոգման և վերակառուցման աշխատանքներին հետևեց ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի վերաթողարկումը 1995 թ. նոյեմբերին: Գաղտնիք չէ, որ ԱԷԿ-ի խնդիրը շատ խոցելի է, քանի որ Եվրամիությունն անընդհատ պահանջում էր, որ Հայաստանը դադարեցնի վերջինիս աշխատանքները: Այդ պահանջի բավարարման համար անհրաժեշտ էր ստեղծել էներգետիկայի այլընտրանքային աղբյուրներ, ինչը իրագործելը այդքան էլ դյուրին չէր: Հաշվի առնելով դա 1996 թ. ՀՀ-ի իշխանությունները եվրոպական պաշտոնյաների հետ վարվող բանակցություններում հաստատեցին իրենց մտադրությունը՝ փակել ատոմակայանը, սակայն դա տեղի կունենար միայն այն ժամանակ, երբ հնարավոր լիներ ապահովել հանրապետության էներգետիկ անվտանգությանն անհրաժեշտ բավարար քանակի այլընտրանքային էներգառեսուրսներով: Իր հերթին, ԵՄ-ը պատրաստակամություն էր հայտնում ատոմակայանի փակման դեպքում տալ անհրաժեշտ ֆինանսական, տեխնիկական օգնություն և ապահովել Հայաստանն այլընտրանքային էներգիայի աղբյուրներով: Ինչպես տեսնում ենք, ՀՀ-ԵՄ հարաբերություններում ՀԱԷԿ-ի փակման հարցը ուրույն տեղ էր զբաղեցնում:

ԵՄ-ը ՀՀ-ին աջակցել է նաև մի շարք այլ ծրագրերի միջոցով՝ Մարդասիրական օգնության (ECHO), Պարենային անվտանգության (Food security), Միջուկային անվտանգության (Nuclear Safety), Բացառիկ ֆինանսական օժանդակության (Exceptional Financial Assistance), Բացառիկ մարդասիրական աջակցության (Exceptional Humanitarian Aid), Օգնություն մեղմելու ռուսաստանյան ճգնաժամի հետևանքները (Aid to mitigate effects of Russian crisis): Մարդասիրական օգնությանը տրված մանդատի համաձայն՝ ծրագրի հիմնական նպատակն էր աջակցել արտակարգ իրավիճակների դեպքում և օգնել բնական աղետներից կամ զինված հակամարտություններից տուժածներին՝ անկախ ռասայից, դավանանքից կամ քաղաքական հայացքներից²: Այս օժանդակությունն էականորեն մեղմեց ՀՀ-ում ստեղծված բարդ իրավիճակը, հնարավոր դարձավ որոշակի չափով թոթափել Սպիտակի երկրաշարժի, ԽՍՀՄ-ի փլուզման և Ղարաբաղյան հակամարտության

¹ Տես Հայկական ատոմային էլեկտրակայանը շահագործումից հանելու ռազմավարություն, <http://archive.is/sLVZq> (վերջին մուտքը 10.03.2014):

² Տես Council regulation (EC) No 1257/96 of 20 June 1996 concerning humanitarian aid, Official journal of the European Communities, No L 163, 2.7.1996, <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:1996:163:0001:0006:EN:PDF>(վերջին մուտքը՝ 10.03.2014):

դժվարությունները: Ծրագրի շրջանակներում 1993-2000 թթ. Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է 67 միլիոն եվրո օգնություն¹: Հավելենք, որ ներկայումս մարդասիրական օգնության ծրագրեր չկան Հայաստանում: Ինչ վերաբերում է Պարենային անվտանգության ծրագրին (այսուհետ՝ ՊԱԾ), ապա այն Հայաստանում գործում է սկսած 1996 թ.: Ծրագրի շրջանակներում հատկացումները նախատեսված էին իրականացնելու գյուղատնտեսական, սոցիալական, հողային բարեփոխումներ, որոնց ընդհանուր նպատակն էր օգնել շրջափակման պայմաններում գտնվող Հայաստանին դուրս գալու ծանր կացությունից և փորձելու նվազագույնի հասցնել երկրում առկա աղքատության մակարդակը: Ծրագիրն առանձնապես օժանդակում է ՀՀ կառավարությանը՝ բարելավելու պետական ծրագրերի պլանավորումը, կառավարումը, սպասարկումն ու արդյունավետությունը, գյուղատնտեսության բնագավառի ծառայությունները, որոնք ուղղված են պարենային անբավարարության կրճատմանը և այլն: ՊԱԾ-ի շրջանակներում 1996-2008 թթ. Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է 105 միլիոն եվրո²: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն Բացառիկ ֆինանսական կամ մակրոֆինանսական օժանդակությունը, որի շրջանակներում 1997 թ. դեկտեմբերի 17-ին ԵՄ-ը որոշում կայացրեց Հայաստանին տրամադրել 28 միլիոն եվրո վարկ և 30 միլիոն եվրո դրամաշնորհ՝ 1998-2005 թթ. ընկած ժամանակահատվածի համար, որոնք Հայաստանին հանձնվեցին 1998 թ. դեկտեմբերին, երբ վերջինս մարտի 51 միլիոն եվրո պարտքը Համայնքին: Դրամաշնորհների նախապայմաններն էին՝ իրականացնել հանրային և քաղաքացիական հատվածի վերափոխումները, ներառյալ հարկային կառավարման, հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը, գործարար միջավայրի վերափոխումները, այդ թվում՝ ավարտին հասցնել ՀՀ-ի անդամակցությունը ԱՀԿ-ին, մասնավորեցնել պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունները, բանկերը, ինչպես նաև վերափոխումներ կատարել էներգետիկ ոլորտում, իրականացնել համապատասխան աշխատանքներ, որոնք ուղղված լինեն ատոմակայանի փակմանը³: Հավելենք, որ 1991-2000 թթ. ընթացքում այդ ծրագրերի շրջանակում ԵՄ-ն ՀՀ-ին տրամադրել է 286,13 միլիոն եվրո օգնություն⁴: Ինչպես տեսնում ենք, ԵՄ-ը հետևողականորեն աջակցել է Հայաստանին՝ հաղթահարելու անկախությունից ի վեր առաջացած դժվարությունները:

¹ St'u Joint answer to Written Questions E-0588/01 and E-0634/01 given by Mr Patten on behalf of the Commission (11 April 2001), C 318 E, 13.11.2001, p. 79, <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2001:318E:0078:0079:EN:PDF> (վերջին մուտքը՝ 10.03.2014):

² St'u ԵՄ ՊԱԾ-ի շրջանակներում Հայաստանին կտրամադրվի 3 մլն եվրո, 29.09.2008, <http://nt.am/am/news/33706/> (վերջին մուտքը՝ 10.03.2014):

³ St'u Internal Evaluation of Macro-financial Assistance operations carried out in Armenia in the period 1998-2003, European Commission directorate general economic and financial affairs resources, Strategic management and control, inter-institutional relations, July 2006, pp. 2-4, http://ec.europa.eu/dgs/economy_finance/evaluation/pdf/armenia_final_report_en.pdf (վերջին մուտքը՝ 10.03.2014):

⁴ St'u Country strategy paper 2002-2006, National indicative programme 2002-2003 Republic of Armenia, 27 December, 2001, p. 10, http://eeas.europa.eu/armenia/csp/02_06_en.pdf (վերջին մուտքը՝ 10.03.2014):

Այսպիսով, ԵՀ/ԵՄ-ը առաջիններից մեկն էր, որ օգնության ձեռք մեկնեց նորակալի Հայաստանի Հանրապետությանը: Ինչպես հայտնի է, Հայաստանի բազմադարյան պատմության ընթացքում հայ ժողովուրդը մեկ անգամ չէ, որ իր փրկության հույսը կապել էվրոպայի հետ: Որոշ դեպքերում սպասումներն արդարացված են եղել, սակայն եղել են նաև հիասթափություններ: Այդուհանդերձ, ակնհայտ է մի բան, որ Եվրոպան երբեք էլ ամբողջովին երես չի թեքել Հայաստանից և վերջինիս խնդիրներից: Բացառություն չկազմեց նաև Եվրոպական երկրները միավորող հիմնական կառույցը՝ Եվրոպական համայնքը, որը բոլոր հնարավոր միջոցներով աջակցել է նորակալի Հայաստանի Հանրապետությանը: ԵՀ/ԵՄ-ը 1992 թ. ուժի մեջ մտած տեխնիկական օգնության ՏԱՍԻՍ-ի և աջակցության այլ ծրագրերի շրջանակներում նշանակալից նյութական, մարդասիրական օգնություն է տրամադրել ՀՀ-ին: 1990-ական թվականների սկզբներին բարդ իրադրության մեջ հայտնված ՀՀ-ի համար այդ աջակցությունն էական նշանակություն ուներ, քանզի որոշակիորեն մեղմացրեց երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը: Հավելենք, որ ՏԱՍԻՍ-ի և աջակցության այլ ծրագրերի միջոցով Եվրամիությունն ուներ իր առջև դրված հստակ նպատակ. ոչ միայն օգնել սոցիալական ծանր իրավիճակում գտնվող Հայաստանին, այլև նրան ամբողջովին դուրս հանել ռուսամետ քաղաքական ուղեծրից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Եվրոպական Միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում, գլխ. խմբ.՝ Ղազինյան Ա., Երևան, «Տիգրան Մեծ», 2010:
2. ԵՄ ՊԱԾ-ի շրջանակներում Հայաստանին կտրամադրվի 3 մլն եվրո, 29.09.2008, <http://nt.am/am/news/33706/>:
3. Հայոց պատմություն, գլխ. խմբ.՝ Սիմոնյան Հր., Երևան, Զանգակ 97 հրատարակչություն, 2000:
4. Հայկական ատոմային էլեկտրակայանը շահագործումից հանելու ռազմավարություն, <http://archive.is/sLVZq>:
5. Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Երևան, «Լուսակն» հրատարակչություն, 2006:
6. Council regulation (EC) No 1257/96 of 20 June 1996 concerning humanitarian aid, Official journal of the European Communities, No L 163, 2.7.1996, <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:1996:163:0001:0006:EN:PDF>:
7. Country strategy paper 2002-2006, National indicative programme 2002-2003 Republic of Armenia, 27 December, 2001 http://eeas.europa.eu/armenia/csp/02_06_en.pdf:
8. Internal Evaluation of Macro-financial Assistance operations carried out in Armenia in the period 1998-2003, European Commission directorate general economic and financial affairs resources, Strategic management and control, inter-institutional relations, July 2006, http://ec.europa.eu/dgs/economy_finance/evaluation/pdf/armenia_final_report_en.pdf:
9. Joint answer to Written Questions E-0588/01 and E-0634/01 given by Mr Patten on behalf of the Commission (11 April 2001), C 318 E, 13.11.2001, <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2001:318E:0078:0079:EN:PDF>:
10. TACIS (Technical Assistance Programme to the former republics of the Soviet Union) Annual report from the Commission 1991 and 1992, COM(93) 362 final, Brussels, 28 July, 1993, <http://aei.pitt.edu/5630/1/5630.pdf>:

11. Taverne B., Petroleum, industry and governments: a study of the involvement of industry and governments in the production and use of petroleum, Netherlands, Kluwer law international, second edition, 2008:

Արման Խաչիկյան, Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների/Եվրոպական Միության համագործակցության սկզբնավորումը – Հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների/Եվրոպական Միության միջև երկկողմ համագործակցության ձևավորման և սկզբնավորման պատմությունը: Հայաստանի Հանրապետությունն անկախություն ձեռք բերելուն զուգընթաց սկսեց զարգացնել հարաբերությունները Եվրոպական Միության հետ: Ցույց է տրվում, որ սկզբնական շրջանում երկկողմ հարաբերությունները զարգանում էին ՏԱՍԻՍ տեխնիկական օգնության շրջանակներում, որի միջոցով Հայաստանն ԵՄ-ից ստանում էր հումանիտար և ֆինանսական օգնություն: Եվրամիությունն աջակցել է ՀՀ-ին վերափոխումների իրականացման գործընթացներում, որոնք ուղղված էին երկրում ժողովրդավարական հասարակության կայացմանը, տնտեսության զարգացմանը, պետական կառավարման ինստիտուտների ամրապնդմանը, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:

Арман Хачикян, Начало сотрудничества Республики Армения и Европейского общества/Европейского союза –

/

Arman Khachikyan, The origin of cooperation between Armenia and the European Community/ European Union – The article presents the history of the origin and initial development of the bilateral cooperation between the Republic of Armenia and the European Community/European Union. Since independence the Republic of Armenia began to develop relations with the European Union. In the initial phase the bilateral relations developed in the framework of the TACIS technical assistance program through which Armenia received from the EU humanitarian and financial assistance. EU assisted Armenia in the implementation of reforms aimed at the formation of the country’s democratic society, economic development, strengthening institutions of governance, human rights and fundamental freedoms.

Արման Խաչիկյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ

